ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19-20-06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

12 սեպտեմբերի 2019թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի
Փոխնախագահ՝ Ա. Ազարյան
անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա.Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 06/09/19թ. «Տորպեդո»-«Մասիս» (ԳԽ001) խաղի մասին (Մարզադաշտում գործող հասարակական զուգարանի սանիտարահիգիենիկ վիճակը բարվոք չէ: Մարզադաշտի տնօրինությունը խոստացել է կարճ ժամանակահատվածում վերացնել առկա թերությունները:) /զեկուցող Հ. Ռշտունի /

2. 06/09/19թ. «Վեստ Արմենիա»-«Անի» (ԳԽ002) խաղի մասին (Մրցավարի լուսատախտակը մեխանիկական էր:) /զեկուցող Հ. Ռշտունի /

3. 06/09/19թ. «Վեստ Արմենիա»-«Անի» (ԳԽ002) խաղի մասին («Անի» թիմի մարզաշապիկների վերին մասում բացակայում էին լատինատառ ազգանունները) /զեկուցող Հ. Ռշտունի /

4. 06/09/19թ. «Արագած»-«Վան» (ԳԽ003) խաղին «Արագած» թիմի ֆուտբոլիստ Եվգենի Կոնյաշինի (N 34218) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար) /զեկուցող Հ. Ռշտունի /

5. 11/09/19թ. «Փյունիկ-1-02»-«Շիրակ-02» (18Ա-001) խաղին «Փյունիկ-1-02» թիմի ֆուտբոլիստ Համբարձում Հովհաննիսյանի (N 23936) հեռացման մասին (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

6. 11/09/19թ. «Փյունիկ-1-02»-«Շիրակ-02» (18Ա-001) խաղին «Շիրակ-02» թիմի ֆուտբոլիստ Սերգո Պետրոսյանի (N 24910) հեռացման մասին (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի /

7. «ՏՐԻԲՈՒՆԱ ՀԿ» ակումբի նախագահ Սենիկ Առաքելյանի (N 5489) մասին՝ («ՏՐԻԲՈՒՆԱ ՀԿ» ակումբի մարզիչ Սենիկ Առաքելյանը հրաժարվել է ֆուտբոլիստուհիներ ուղարկել կանանց Մ-19 և Մ-17 հավաքականներ) /զեկուցող Հ. Ռշտունի/

1. 2019թ. փետրվար ամսից ի վեր Սենիկ Առաքելյանը պարբերաբար փորձում էր խանգարել Կանանց Մ-19տ հավաքականի յուրաքանչյուր ամիս անցկացվող

մարզական հավաքներին՝ չուղարկելով հրավիրված ֆուտբոլիստուհիներին, կամ ուղարկելով ըստ իր ցանկության

2. 2019թ. օգոստոսի 25-29-ը անցկացված հավաքին չի ուղարկել և որևէ ֆուտբոլիստուհու, դրանով իսկ խոչընդոտել է հավաքի բնականոն ընթացքին, ինչպես նաև չի տրամադրել ֆուտբոլիստուհիների անձնագրերը ՀՖՖ հավաքականների ապահովման բաժին՝ Բոսնիայում կայանալիք կանանց Եվրոպայի Մ-19 առաջնության որակավորման փուլի մրցաշարին մասնակցելու նպատակով մուտքի վիզաներ ստանալու համար:

3. 2019թ. սեպտեմբերի 9-11-ը անցկացված Կանանց Մ-17 հավաքականի մարզական հավաքին կրկին չի ուղարկել որևէ ֆուտբոլիստուհու:

1. 06/09/19թ. «Տորպեդո»-«Մասիս» (ԳԽ001) խաղի մասին (Մարզադաշտում գործող հասարակական զուգարանի սանիտարահիգիենիկ վիճակը բարվոք չէ: Մարզադաշտի տնօրինությունը խոստացել է կարճ ժամանակահատվածում վերացնել առկա թերությունները:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 06/09/19թ. «Տորպեդո»-«Մասիս» (ԳԽ001) խաղին մարզադաշտում գործող հասարակական զուգարանի սանիտարահիգիենիկ վիճակը բարվոք չլինելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ ՖԱ «Տորպեդո» ակումբին հայտարարել նկատողություն, հաշվի առնելով այն, որ թիմն անցկացնում էր իր առաջին հանդիպումը Հայաստանի գավաթի խաղարկությունում:

2. 06/09/19թ. «Վեստ Արմենիա»-«Անի» (ԳԽ002) խաղի մասին (Մրցավարի լուսատախտակը մեխանիկական էր:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2. 06/09/19թ. «Վեստ Արմենիա»-«Անի» (ԳԽ002) խաղին մրցավարի լուսատախտակը մեխանիկական լինելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ ՖԱ «Վեստ Արմենիա» ակումբին հայտարարել նկատողություն, հաշվի առնելով այն, որ թիմն անցկացնում էր իր առաջին հանդիպումը Հայաստանի գավաթի խաղարկությունում:

3. 06/09/19թ. «Վեստ Արմենիա»-«Անի» (ԳԽ002) խաղի մասին («Անի» թիմի մարզաշապիկների վերին մասում բացակայում էին լատինատառ ազգանունները)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. 06/09/19թ. «Վեստ Արմենիա»-«Անի» (ԳԽ002) խաղին «Անի» թիմի մարզաշապիկների վերին մասում լատինատառ ազգանունների բացակայության համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ ՖԱ «Անի» ակումբին հայտարարել նկատողություն, հաշվի առնելով այն,

որ թիմն անցկացնում էր իր առաջին հանդիպումը Հայաստանի գավաթի խաղարկությունում:

4. 06/09/19թ. «Արագած»-«Վան» (ԳԽ003) խաղին «Արագած» թիմի ֆուտբոլիստ Եվգենի Կոնյաշինի (N 34218) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

4. 06/09/19թ. «Արագած»-«Վան» (ԳԽ003) խաղին «Արագած» թիմի ֆուտբոլիստ Եվգենի Կոնյաշինի (N 34218) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 32-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Եվգենի Կոնյաշինին որակազրկել 1 խաղով, «Արագած» ֆուտբոլային ակումբ Հ.Կ-ին տուգանել 25000 ՀՀ դրամ

5. 11/09/19թ. «Փյունիկ-1-02»-«Շիրակ-02» (18Ա-001) խաղին «Փյունիկ-1-02» թիմի ֆուտբոլիստ Համբարձում Հովհաննիսյանի (N 23936) հեռացման (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար) մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

5. 11/09/19թ. «Փյունիկ-1-02»-«Շիրակ-02» (18Ա-001) խաղին «Փյունիկ-1-02» թիմի ֆուտբոլիստ Համբարձում Հովհաննիսյանի (N 23936) հեռացման (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 35-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Համբարձում Հովհաննիսյանին որակազրկել 2 խաղով, Փյունիկ Ֆուտբոլային Ակումբ Հասարակական Կազմակերպությանը տուգանել 5000 ՀՀ դրամ:

6. 11/09/19թ. «Փյունիկ-1-02»-«Շիրակ-02» (18Ա-001) խաղին «Շիրակ-02» թիմի ֆուտբոլիստ Սերգո Պետրոսյանի (N 24910) հեռացման (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար) մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

6. 11/09/19թ. «Փյունիկ-1-02»-«Շիրակ-02» (18Ա-001) խաղին «Շիրակ-02» թիմի ֆուտբոլիստ Սերգո Պետրոսյանի (N 24910) հեռացման (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 35-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Սերգո Պետրոսյանին որակազրկել 2 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 5000 ՀՀ դրամ

7. «ՏՐԻԲՈՒՆԱ ՀԿ» ակումբի նախագահ Սենիկ Առաքելյանի (N 5489) մասին՝ («ՏՐԻԲՈՒՆԱ ՀԿ» ակումբի մարզիչ Սենիկ Առաքելյանը հրաժարվել է ֆուտբոլիստուհիներ ուղարկել կանանց Մ-19 և Մ-17 հավաքականներ)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

7. «ՏՐԻԲՈՒՆԱ ՀԿ» ակումբի նախագահ և մարզիչ Սենիկ Առաքելյանի, կանանց Մ-19տ հավաքականի յուրաքանչյուր ամիս անցկացվող ուսումնամարզական հավաքներին խանգարելու, Բոսնիայում կայանալիք կանանց Եվրոպայի Մ-19 առաջնության որակավորման փուլի մրցաշարին մասնակցելու մուտքի վիզաներ

ստանալուն խոչընդոտելու, կանանց Մ-19 և Մ-17 հավաքականներ ֆուտբոլիստուհիներ չուղարկելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնագրքի 30-րդ հոդվածի 02-րդ և 03-րդ, 5-րդ հոդվածի 2-րդ կետերի համաձայն՝ Սենիկ Առաքելյանին զրկել ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու իրավունքից 1 տարի ժամկետով և «ՏՐԻԲՈՒՆԱ ՀԿ» ակումբի Գյումրի-1 թիմին հանել 2019-2020 մրցաշրջանի կանանց ֆուտբոլի առաջնությունից:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: